Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 3

ք.Երևան 30.11.2011թ.

Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների արդյունքների բողոքարկման մասին

2011 թվականի նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների հանձնաժողովի նիստը, հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա. Օրբելյան,

հանձնաժողովի անդամներ՝

1. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար Նունե Խաչատրյան,

2. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյան,

3. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարների և ՔԿԱԳ մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ Դ. Մխեյան,

4. Կենտրոն նոտարական տարածքի նոտար Մ. Մանուկյան,

5. Կենտրոն նոտարական տարածքի նոտար Հ. Հարությունյան,

մասնակցությամբ հանձնաժողովի քարտուղար՝ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարների և ՔԿԱԳ մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Ն. Խալաթյանի:

Հանձնաժողովի կողմից քննարկվեցին նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննություններին մասնակցած դիմորդների դիմումները և բողոքները:

Մասնավորապես, թեստավորման փուլի արդյունքների հրապարակումից հետո 2011թ.-ի նոյեմբերի 28-ին 11 դիմորդ դիմում էր ներկայացրել թեստերի իր պատասխանները ստանալու համար: Համեմատման նպատակով նշված դիմորդներին տրամադրվեց թեստերի՝ ինչպես վերջիններիս կողմից լրացված և ստորագրված տարբերակը, այնպես էլ թեստերի տարբերակը, որում նշված էին սխալ պատասխանները:

Դիմորդներից 4-ը՝ Ելենա Հակոբյանը (12 միավոր), Աննա Մանուկյանը (70 միավոր), Իռեն Սարգսյանը (84 միավոր) և Հասմիկ Այվազյանը (62 միավոր), ծանոթանալով իրենց աշխատանքներին, հրաժարվեցին բողոքարկել:

Դիմորդներից 7-ը՝ Անահիտ Աթոյանը (67 միավոր), Անուշավան Նիկողոսյանը (56 միավոր), Անահիտ Սաղաթելյանը (55 միավոր), Մարգարիտա Գյուլումյանը (67 միավոր), Վարդուհի Սարոյանը (71 միավոր), Լիլիթ Մուրադյանը (70 միավոր) և Էռնա Թադևոսյանը (56 միավոր) բողոքարկեցին թեստավորման արդյունքները:

Դիմորդները ծանուցվեցին, որ նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունների բողոքարկումը տեղի է ունենալու 2011թ. նոյեմբերի 29-ին ՀՀ արդարադատության նախարարությունում, ժամը 18:00-ին:

2011թ. նոյեմբերի 29-ին քննարկվեցին ներկայացված բողոքները, որին մասնակցեցին բողոք ներկայացրած դիմորդներից երկուսը՝ Մարգարիտա Գյուլումյանը և Լիլիթ Մուրադյանը:

Մարգարիտա Գյուլումյանը բողոքարկեց իր թեստի թիվ 49, 23, 38, 67, 87, 34, 26, 50, 11, 58, 98, 97, 65 և 22 հարցերը, որոնցից 3-ի (49,34,98) մասով հանձնաժողովը բողոքը բավարարեց, իսկ մնացած հարցերի մասով բողոքը մերժվեց: Արդյունքում դիմորդի հավաքած 67 միավորը ավելացվեց 3 միավորով և դարձավ 70 միավոր:

Լիլիթ Մուրադյանը բողոքարկեց իր թեստի թիվ 10, 13, 83, 59, 25, 30, 89, 76, 51, 18 և 32 հարցերը, որոնցից 2-ի (10, 89) մասով հանձնաժողովը բողոքը բավարարեց, իսկ մնացած հարցերի մասով բողոքը մերժվեց: Արդյունքում դիմորդի հավաքած 70 միավորը ավելացվեց 2 միավորով և դարձավ 72 միավոր:

Մյուս բողոքների քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց, որ դրանք ենթակա չեն բավարարման:

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Օրբելյան
անդամներ՝	Ն. Խաչատրյան
	Ն. Փանոսյան
	Դ. Մխեյան
	Մ. Մանուկյան
	Հ. Հարությունյան
քարտուղար՝	Ն. Խալաթյան